Հայաստան, ք. Երևան

Դեկտեմբերի 19, 2019թ. NG-02-443-1912

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
NEW GENERATION

22 Ֆինանսների նախարար
Ատոմ Ջանջուղազյանին
Պատճենը՝ «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ»
հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր
տնօրեն Սոնա Այվազյանին

Հարգելի պարոն Ջանջուղազյան,

2019թ.-ի դեկտեմբերի 6-ին Դաբլ Թրի Բայ Հիլթոն հյուրանոցում տեղի ունեցավ *«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման կարգ»-ի նախագծի* վերաբերյալ հանրային քննարկումը, որը կազմակերպվել էր «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության (ԹԻՀԿ) նորմից, որի մշակել է «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման կարգ»-ի նախագիծ՝ ներկայացնելու 22 կառավարությանը:

Հանրային քննարկման ընթացքում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը ներկայացրեց իր դիտարկումները նախագծի վերաբերյալ:

Ուզում ենք ներկայացնում ենք նախագծի վերաբերյալ դիտարկումները գրավոր տարբերակով.

1. Հայաստանի հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման կարգի դրամաշնորհների հատկացման սկզբունքների 5-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվում է.

- Նպատակային ուղղվածություն. Պետական ֆինանսավորումը պետք է ունենա հստակ սահմանված նպատակներ և առաջնահերթություններ՝ կառավարության քաղաքականության և քաղաքացիների կարիքներին համապատասխան:

Սույն հոդվածի հետ կապված հարցի առնչությամբ նաև, այն հանգամանքը, որ պետական ֆինանսավորումը տրամադրվում է ելնելով ամբողջ տարվա ռազմավարությունից, առաջարկում ենք կատարել հետևյալ լրացումը.

- Նպատակային ուղղվածություն. Պետական ֆինանսավորումը պետք է ունենա հստակ սահմանված նպատակներ և առաջնահերթություններ՝ կառավարության քաղաքականության և քաղաքացիների կարիքների և ՀՀ ռազմավարությանը համապատասխան:

Հայաստան, ք. Երևան
Դեկտեմբերի 19, 2019թ.   NG-02-443-1912

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
NEW GENERATION

2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման կարգի մրցութային հանձնաժողովների կազմավորման կարգի 6-րդ հոդվածով սահմանվում է.

- Դրամաշնորհի չափը սահմանվում է բյուջեով: Բյուջեի հաստատումից հետո համապատասխան պետական մարմնի ղեկավարը կազմավորում է տվյալ դրամաշնորհի հատկացման նպատակով անցկացվելիք մրցույթի՝ *առնվազն 5 անդամից* բաղկացած մրցութային հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով), որի մեջ մտնում են մրցույթ հայտարարած գերատեսչության մեկ ներկայացուցիչ, ՀՀ կառավարության, *Ազգային ժողովի* և դրամաշնորհառու տեղական կամ միջազգային կազմակերպություններից մեկական ներկայացուցիչ, ինչպես նաև անկախ փորձագետներ՝ ըստ համաձայնության: Անկախ փորձագետ կարող են հանդես գալ նաև քաղաքացիական հասարակության կառույցների համապատասխան ներկայացուցիչները:

Սույն հոդվածը առաջարկում ենք վերաձևակերպել հետևյալ կերպ.

- Դրամաշնորհի չափը սահմանվում է բյուջեով: Բյուջեի հաստատումից հետո համապատասխան պետական մարմնի ղեկավարը կազմավորում է տվյալ դրամաշնորհի հատկացման նպատակով անցկացվելիք մրցույթի՝ **առնվազն 5 և առավելագույնը 9 անդամից** բաղկացած մրցութային հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով), որի մեջ մտնում են մրցույթ հայտարարած գերատեսչության մեկ ներկայացուցիչ, ՀՀ կառավարության, **ՀՀ Ազգային Ժողովի** և դրամաշնորհառու տեղական կամ միջազգային կազմակերպություններից մեկական ներկայացուցիչ, ...

3. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման կարգի մրցութային հանձնաժողովների կազմավորման կարգի 9-րդ հոդվածով սահմանվում է.

- Փորձագետների շտեմարանում ներառվելու համար դիմում ներկայացնելիս՝ փորձագետը պարտավորվում է տրամադրել գործող կոնտակտային տվյալներ, հավաստի և թարմ տեղեկատվություն իր մասին և նշել միայն այն ոլորտները, որոնց վերաբերյալ նա ունի բավարար փորձագիտական պատրաստվածություն, որը հստակ հիմնավորումներով պետք է արտահայտվի իր ինքնակենսագրական փաստաթղթում (համապատասխան աշխատանքային փորձ, կրթություն, ոլորտում իրականացված ծրագրեր, մասնակցություն ոլորտային դասընթացների, սեմինարների և այլ միջոցառումների, հրատարակված աշխատություններ և այլն):

Հայաստան, ք. Երևան

Դեկտեմբերի 19, 2019թ. NG-02-443-1912

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
NEW GENERATION

Սույն հոդվածի հետ կապված առաջարկում ենք կատարել հետևյալ լրացումը․

- … ներկայացնել երաշխավորող նամակ այն դրամաշնորհատու կազմակերպությունից ում հետ վերջին մեկ տարվա ընթացքում աշխատել է փորձագետը և/կամ երաշխավորող նամակ ռեգիստրում գրանցված առնվազն երկու փորձագետից։

4. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրականացվող անձանց դրամաշնորհների հատկացման կարգի մրցութային հանձնաժողովների կազմավորման կարգի 11-րդ հոդվածով սահմանվում է.

- Փորձագետների ռեեստրից ընտրված հանձնաժողովում նշանակվելու առաջին պայմանը ծրագրի թեմատիկ ծածկույթի և տվյալ փորձագետի փորձագիտական ոլորտների համապատասխանությունն է։ Եթե կան մի քանի փորձագետներ, ովքեր իրենց ոլորտներով համապատասխանում են տվյալ ծրագրին, ապա փորձագետների նշանակման ժամանակ նախապատվությունը տրվում է այն փորձագետներին, **ովքեր իրենց փորձառությամբ առավելապես համապատասխանում են տվյալ ծրագրին, կամ առ այդ պահը համեմատաբար փոքր թվով ծրագրեր են գնահատել։**

Սույն հոդվածի հետ կապված առաջարկում ենք.

- Նշել այն մարմնին ով որոշելու է փորձագետի համապատասխանության հարցը։
- Ինչպես նաև համապատասխանության մասով ընտրության երկու հնարավորություն է տրվում կամ տվյալ ծրագրին համապատասխանությունը կամ համեմատաբար փոքր թվով ծրագրեր գնահատելը, որը մեր կարծիքով խտրականություն է և պետք է հստակեցնել։

5. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրականացվող անձանց դրամաշնորհների հատկացման կարգի մրցութային հանձնաժողովների կազմավորման կարգի 12-րդ հոդվածով սահմանվում է.

- Հանձնաժողովի կազմում (համաձայնությամբ) ընդգրկվելուց հետո փորձագետը ծառայությունների մատուցման մասին պայմանագիր է ստորագրում մրցույթը հայտարարած պետական մարմնի հետ, որի հիման վրա կատարվում են նրա փորձագիտական աշխատանքի դիմաց վճարումները…

Սույն հոդվածի առթիվ առաջարկում ենք կատարել հետևյալ լրացումը.

ՀՀ, 0001 Երևան, Թումանյան 10, բն. 7
RA, 0001 Yerevan, Apt. 7, 10 Tumanyan str.

Հայաստան, ք. Երևան

Դեկտեմբերի 19, 2019թ. NG-02-443-1912

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
NEW GENERATION

- Հանձնաժողովի կազմում (համաձայնությամբ) ընդգրկվելուց հետո փորձագետը ծառայությունների մատուցման մասին պայմանագիր և **շահերի բախման թերթիկ է ստորագրում** մրցույթը հայտարարած պետական մարմնի հետ, որի հիման վրա կատարվում են նրա փորձագիտական աշխատանքի դիմաց վճարումները:

6. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման կարգի մրցութային հանձնաժողովի գործունեության 16 րդ հոդվածով սահմանվում է.

- Հանձնաժողովի անդամները պարտավորվում են հրաժարվել իրենց փորձագիտական գնահատման տրված այն ծրագրերից, որոնց ներկայացնող կազմակերպության հետ իրենք կամ իրենց *ընտանիքի անդամներն* ունեն կամ ունեցել են որևէ կապ (որպես հիմնադիր, անդամ կամ աշխատակազմի անդամ)…

Վերոգրյալի առթիվ առաջարկում ենք հստակ թվարկել ընտանիքի անդամներին:

7. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման կարգի մրցութային հանձնաժողովի գործունեության 20-րդ հոդվածի ե) ենթակետով սահմանվում է.

- իրականացնում է իրեն վերապահված այլ լիազորություններ:

Սույն հոդվածի մասով առաջարկում ենք կատարել լրացում.

- իրականացնում է, իրեն **գրավոր կերպով** վերապահված այլ լիազորություններ:

8. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման կարգի մրցույթի մասին հայտարարությանը և մրցույթի հրավերի 26-րդ հոդվածով սահմանվում է.

- Մասնակիցը կարող է հանձնաժողովից պահանջել մրցույթի հրավերի պարզաբանում՝ մրցույթի մասին հայտարարության հրապարակման պահից 5 *աշխատանքային օրվա ընթացքում:* Պատվիրատուի կողմից պարզաբանումը տրամադրվում է հարցումը ստանալու մասին գրությունը պետական մարմնում մուտքագրվելու օրվանից 5 *աշխատանքային օրվա ընթացքում:* Հարցը և պարզաբանումը ենթակա են հրապարակման միասնական պաշտոնական կայքում, որտեղ չեն նշվում պարզաբանումը պահանջող մասնակցի տվյալները:

Հայաստան, ք. Երևան

Դեկտեմբերի 19, 2019թ. NG-02-443-1912

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
NEW GENERATION

Սույն հոդվածի մասով առաջարկում ենք վերաձևակերպել հետևյալ կերպ.

- Մասնակիցը կարող է հանձնաժողովից պահանջել մրցույթի հրավերի պարզաբանում՝ մրցույթի մասին հայտարարության հրապարակման պահից 5 *աշխատանքային օրվա ընթացքում:* Քարտուղարի կողմից պարզաբանումը տրամադրվում է հարցումը ստանալու մասին գրությունը պետական մարմնում մուտքագրվելուց հետո **«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:** Հարցը և պարզաբանումը ենթակա են հրապարակման միասնական պաշտոնական կայքում, որտեղ չեն նշվում պարզաբանումը պահանջող մասնակցի տվյալները:

9. Հայաստանի հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման կարգի մրցույթի հայտերին ներկայացվող պահանջների 30-րդ հոդվածով սահմանվում է.

- Սահմանված կարգի պահանջներին ոչ համապատասխան ներկայացված հայտերը, ինչպես նաև հայտեր ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո ստացված հայտերը *մերժվում են:*

Սույն հոդվածի առթիվ, քանի որ չեն սահմանվում թե նմանատիպ հայտերը որ փուլում են մերժվում, առաջարկում ենք հստակ նշել թե որ փուլում են վերոնշյալ հայտերը մերժվում:

10. Հայաստանի հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման կարգի մրցույթի հայտերին ներկայացվող պահանջների 31-րդ հոդվածով սահմանվում է.

- Մասնակիցը չի կարող նույն մրցույթին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը մինչև հայտերը ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտն ունի հայտը վերանայելու կամ հայտից հրաժարվելու իրավունք:

Սույն հոդվածի մասով առաջարկում ենք

- **Կատարել նշում այն մասին թե արդյոք մասնակիցը կարող է մեկ այլ հայտում որպես գործընկեր հանդես գալ թե ոչ:**
- **Ավելացնել հայտում փոփոխություն կատարելու կարգի մասին տեղեկատվություն.**

Հայաստան, ք. Երևան
Դեկտեմբերի 19, 2019թ.   NG-02-443-1912

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
NEW GENERATION

11. Հայաստանի հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման կարգի մրցութային մրցույթի հայտերին ներկայացվող **պահանջների** 32-րդ հոդվածով սահմանված է.

- Հայտի բովանդակությունը պետք է պարունակի հետևյալ կետերը՝

   1) *Ծրագրի իրականացման անհրաժեշտության հիմնավորում, ներառյալ շահառու խմբերի կարիքները,*
   2) *Ծրագրի նպատակը և խնդիրները,*
   3) *Ծրագրի գործողությունները՝ ներառյալ ժամկետներ, չափելի ցուցանիշներ,*
   4) *Ակնկալվող արդյունքները,*
   5) *Ծրագրի կայունությունը և շարունակելիությունը,*
   6) *Ծրագրի սեփականության մեխանիզմները,*
   7) *Ծրագրի շահառուների նկարագիրը,*
   8) Ծրագրի թիմի նկարագիրը, պարտականությունների բաշխումը,
   9) *Կազմակերպության մասին համառոտ տեղեկատվություն՝ ներառյալ կանոնադրական նպատակները և խնդիրները, փորձառությունը,*
   10) Կազմակերպության կողմից վերջին երեք տարում ստացված դրամաշնորհները և ֆինանսավորման աղբյուրները, ֆինանսավորող կազմակերպությունում պատասխանատու աշխատակցի կոնտակտային տվյալները,
   11) Ծրագրի բյուջե, ներառյալ ակնկալվող ֆինանսական և ոչ ֆինանսական ներդրումը կազմակերպության միջոցներից կամ այլ աղբյուրներից.

   Հայտին կից ներկայացվում է կազմակերպության գրանցման վկայականի պատճենը, ծրագրի հիմնական աշխատակազմի ինքնակենսագրականները:

Նույն հոդվածի մասով, կարծում ենք, որ անհրաժեշտ է դնել հստակ սահմանաչափեր տեղեկատվության տրամադրման հետ կապված և առաջարկում ենք կատարել հետևյալ լրացումները.

1. Գործադիր ամփոփում՝ Ծրագրի իրականացման անհրաժեշտության հիմնավորում, ներառյալ շահառու խմբերի կարիքները, և ընդհանուր բյուջեն **/կես էջի սահմաններում/**
2. Կարիքի ձևակերպում **/առավելագույնը մեկ էջ/**
3. Ծրագրի նպատակը և խնդիրները, **/երկու էջ/**
4. Ծրագրի գործողությունները՝ ներառյալ ժամկետներ, չափելի ցուցանիշներ,
5. Ակնկալվող արդյունքները, **/մեկ էջ/**
6. Ծրագրի կայունությունը և շարունակելիությունը,
7. Ծրագրի սեփականության մեխանիզմները,

Հայաստան, ք. Երևան

Դեկտեմբերի 19, 2019թ. NG-02-443-1912

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
NEW GENERATION

9. Ծրագրի շահառուների և թիրախ խմբի նկարագիրը.

10. Ներկայացնել կազմակերպության առաջին էջի և այն էջերի պատճենները, որտեղ առկա է տեղեկատվություն կազմակերպության գրանցման, անվանման, նպատակների ու խնդիրների մասին:

...

12. Հայաստանի հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման կարգի հայտերի ուսումնասիրությունը և գնահատման կարգի 38-րդ հոդվածում սահմանվում է.

- Հանձնաժողովի անդամները գնահատման արդյունքները ուղարկում են քարտուղարին՝ նիստից առնվազն *մեկ օր առաջ*, որն ամփոփում է հանձնաժողովի անդամների կողմից գնահատված ծրագրերի փաստաթղթերը, հաշվարկում յուրաքանչյուր հայտի միջին միավորները: Յուրաքանչյուր հայտի միջին գնահատականների հաշվարկից հետո նիստին քննարկման են ներկայացվում այն հայտերը, որոնց ստացած միջին գնահատականը բարձր է անցումային շեմից: *Անցումային շեմը սահմանվում է հանձնաժողովի կողմից՝ նիստի սկզբում:* Անցումային շեմը որևէ մասնակցի կողմից չհաղթահարվելու դեպքում՝ մրցույթային հանձնաժողովը չի ընտրում հաղթող կազմակերպություն:

Սույն հոդվածի առթիվ առաջարկում ենք հետևյալը.

- **Հանձնաժողովի անդամների կողմից գնահատման արդյունքների ուղարկման համար նախատեսված ժամկետը փոփոխել՝ ավելացնել:**
- **Անցումային շեմը ամրագրել ի սկզբանե, որը կլինի մշտական՝ օրինակ 0-5 բալ:**

13. Հայաստանի հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման կարգի մրցույթի արդյունքների կարգի 39-րդ հոդվածում սահմանվում է.

- Մրցույթի արդյունքներն ամփոփվում են հանձնաժողովի ամփոփիչ նիստում՝ հանձնաժողովի անդամների կողմից լրացված գնահատման ձևի հիման վրա: Ամփոփիչ նիստում՝ քննարկումների արդյունքում հանձնաժողովի անդամները կարող են փոփոխություն անել իրենց կողմից գնահատման ձևում լրացրած միավորները:

Հայաստան, ք. Երևան

Դեկտեմբերի 19, 2019թ. NG-02-443-1912

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
NEW GENERATION

Սույն կետի հետ կապված, հաշվի առնելով այն, որ անկախ փորձագետ կարող են հանդես գալ նաև քաղաքացիական հասարակության կառույցների համապատասխան ներկայացուցիչները, որը կարող է կոռուպցիոն ռիսկեր ստեղծել, առաջարկում ենք փորձագետներին տարանջատել հանձնաժողովի անդամներից:

14. Հայաստանի հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման կարգի մրցույթի պայմանների 41-րդ հոդվածով սահմանվում է.

- Հայտերի գնահատման վերաբերյալ վերջնական որոշումը իրականացվում է քվեարկությամբ: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք, քվեարկում է կամ, դեմ կամ ձեռնպահ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի, իսկ նրա բացակայության դեպքում հանձնաժողովի նախագահողի ձայնը վճռորոշ է:

Վերոգրյալի արդիվ առաջարկում ենք հստակ նշում կատարել այն մասին թե նախագահի բացակայության դեպքում ում ձայնն է վճռորոշ լինելու, ով է վավերացնելու նախագահողին:

15. Հայաստանի հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման կարգի մրցույթի պայմանների 43-րդ հոդվածի գ) ենթակետով սահմանվում է.

- գ) ներկայացվել է *երեքից պակաս հայտ*: Այս դեպքում կազմակերպվում է կրկնակի մրցույթ: Կրկնակի կազմակերպվող մրցույթին երեքից պակաս հայտ ստանալու դեպքում մրցույթը համարվում է կայացած, եթե առնվազն մեկ մասնակցի հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին:

Սույն հոդվածի հետ կապված հաշվի առնելով, որ ծրագրերը կարող են տարբեր լինել և ոլորտում գործող ՀԿ-ների կամ դիմել ցանկացող ՀԿ-ների թիվը սահմանափակ և նման սահմանափակումը արհեստական խոչընդոտ է ստեղծելու ծրագրին դիմելիս: Ուստի առաջարկում ենք այդ կետը հանել:

16. Հայաստանի հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման կարգի մրցույթի պայմանների հաստատման կարգի 45-րդ հոդվածով սահմանվում է.

Հայաստան, ք. Երևան

Դեկտեմբերի 19, 2019թ. NG-02-443-1912

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
NEW GENERATION

- Պետական մարմնի ղեկավարը սույն կարգի 43-րդ կետում նշված որոշումն ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում հաստատում կամ *մերժում է այն:*

Սույն հոդվածի հնգ կարգված առաջարկում առաջարկում ենք կատարել հետևյալ լրացումը.

- Պետական մարմնի ղեկավարը սույն կարգի 43-րդ կետում նշված որոշումն ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում հաստատում կամ մերժում է այն: **Մերժման դեպքում ներկայացնում է ամփոփ հիմնավորում, որը կարող է բողոքարկվել:**

17. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման կարգի մրցույթի պայմանների հաստատման կարգի 47-րդ հոդվածով սահմանվում է.

- Գործակերպությունը պայմանագրի նախագիծն ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում պետական մարմնի աշխատակազմի ղեկավարին է ներկայացնում իր կողմից ստորագրված և կնքված պայմանագրի երկու օրինակը: Աշխատակազմի ղեկավարը կազմակերպության կողմից ստորագրված *և կնքված պայմանագրի* օրինակներն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում ու կնքում է դրանք և մեկ օրինակը նաև օրը վերադարձնում պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությանը:

Սույն հոդվածի մասով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ուղղակիորեն նախատեսված չէ իրավաբանական անձի՝ կնիք ունենալու պարտականությունը, առաջարկում ենք վերձևակերպել և *կնքված* եզրույթը հանել: Քանի որ այն ավելորդ դժվարություն է ստեղծում իրավաբանական անձի համար:

Եթե ծրագրին դիմել են մի քանի կազմակերպություններ կոնսորցիում կազմելու միջոցով, ապա դա պայմանագրում անհրաժեշտ է նշել մյուս կողմերին նույնպես: Այդ պարագայում տվյալ կետը ամբողջությամբ պետք է վերաձևակերպել ներառելով նման դեպքերում նաև մյուս կողմերին:

18. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման կարգի մրցույթի արդյունքների հաստատման կարգի 48-րդ հոդվածով սահմանվում է.

- Պայմանագրում, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջներից, նշվում են նաև դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող ծրագրի անվանումը, կցվում է ծրագրի հայտը և բյուջեն՝ որպես պայմանագրի անբաժանելի մաս, ինչպես նաև նշվում են ծրագրի իրականացման համար պատասխանատու ներկայացուցչի տվյալները:

Սույն հոդվածի հետ կապված առաջարկում ենք կատարել հետևյալ լրացումը.

- Պայմանագրում, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր պահանջներից, նշվում են նաև դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող ծրագրի անվանումը, կցվում է ծրագրի հայտը և բյուջեն՝ որպես պայմանագրի անբաժանելի մաս, ինչպես նաև նշվում են ծրագրի իրականացման համար պատասխանատու ներկայացուցչի տվյալները, ինչպես նաև լոգոների օգտագործումը և հղումը ֆինանսավորողի մասին:

19. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման կարգի մրցույթի արդյունքների հաստատման կարգի 49-րդ հոդվածով սահմանվում է

- Կազմակերպությունը, որի հետ պետք է կնքվի դրամաշնորհի հատկացման պայմանագիր, կարող է հրաժարվել պայմանագիր կնքելուց՝ դրա մասին պայմանագրի նախագիծն ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում ծանուցելով պետական մարմնի աշխատակազմի ղեկավարին: Նման դեպքում հանձնաժողովը կարող է ընտրել պրոցում կարճ ցուցակում հաջորդ դիրքը զբաղեցնող կազմակերպության հետ պայմանագիր կնքելու մասին: Այդ դեպքում պայմանագիր կնքելիս կիրառվում են սույն կարգի 45-րդ և 46-րդ կետերով նախատեսված դրույթները:

Սույն հոդվածի մասով առաջարկում ենք կատարել հետևյալ լրացումը.

- Կազմակերպությունը, որի հետ պետք է կնքվի դրամաշնորհի հատկացման պայմանագիր, կարող է հրաժարվել պայմանագիր կնքելուց՝ դրա մասին պայմանագրի նախագիծն ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցելով պետական մարմնի աշխատակազմի ղեկավարին ...

Հայաստան, ք. Երևան

Դեկտեմբերի 19, 2019թ. NG-02-443-1912

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
NEW GENERATION

20. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց դրամաշնորհների տրամադրման կարգի հաշվետվողականության կարգի 52-րդ հոդվածով սահմանված է

- Կազմակերպությունը պարտավոր է ներկայացնել ծրագրի իրականացման մասին հաշվետվություններ: Եթե ծրագրի տևողությունը 6 ամիս կամ ավելի է, ապա կարող են ներկայացվել միջանկյալ և ամփոփական հաշվետվություններ՝ պայմանագրով սահմանված կարգով: Վեց ամսից պակաս տևողությամբ ծրագրերի դեպքում ներկայացվում են միայն ամփոփական հաշվետվություններ: Հաշվետվությունները ներառում են հետևյալ բաժինները՝

...

Առաջարկում ենք կատարել հետևյալ լրացումը.

- Կատարել լրացում և ավելացնել գ) ենթակետ՝ լուսանկարներ և կամ այլ հավելվածներ:

Սույնով խնդրում ենք,

Քննարկման առարկա դարձնել «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի առաջարկությունները:

Խնդրում ենք «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ին գրավոր՝ օրենքով սահմանված ժամկետներում տեղեկացնել առաջարկությունների վերաբերյալ սույն գրության ընթացքի մասին:

Հարգանքով՝

ՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյան

Կատարող՝ Շուշան Մելքոնյան
+374 60 47 69 89